Բիզնես ավանդ

Լրացուցիչ տեղեկատվություն

ԱԿԲԱ ԲԱՆԿՈՒՄ անհատ ձեռնարկատերերի բանկային ավանդների հատուցումը երաշխավորված է «Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի» կողմից՝ հատուցման ենթակա ավանդների չափերով, մասնավորապես՝

Ավանադի արժութային կառուցվածքը	Եթե նույն բանկում ունենք միայն դրամային ավանդ	Եթե նույն բանկում ունենք միայն աչտարժութային ավանդ	Եթե նույն բանկում ունենք և ՀՀ դրամով, և արտարժույթով ավանդ	
			Եթե դրամային ավանդը 7 միլիոն ՀՀ դրամից ավել է	Եթե դրամային ավանդը 7 միլիոն ՀՀ դրամից պակաս է
Ավանդի երաշխավորման առավելագույն չափը	**16 միլիոն ՀՀ դրամ**	**7 միլիոն ՀՀ դրամ**	**16 միլիոն ՀՀ դրամ (երաշխավորվում է միայն դրամային ավանդը)**	**երաշխավորվում է դրամային ավանդն ամբողջությամբ և արտարժութային ավանդը՝ 7 միլիոն ՀՀ դրամի և հատուցված դրամային ավանդի տարբերության չափով**

- Ավանդային պայմանագրի գործողության ավարտից հետո ընթացիկ հաշվի պահպանման սակագները սահմանվում են «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ կողմից իրականացվող գործառնությունների սակագներին համապատասխան:
- Ավանդային պայմանագրի գործողության ավարտից հետո ընթացիկ հաշվի փակման դեպքում հետագայում ավանդ ներդնելու նպատակով դրա վերաբացումն անվճար է:
- Ավանդային հաշվում ավանդատուի անունով կարող են մուտքագրվել նաև երրորդ անձանց դրամական միջոցները՝ նրա ավանդի հաշվի մասին անհրաժեշտ տվյալների նշումով
- Արտարժույթով ներդրված ավանդների դիմաց հաշվարկված տոկոսագումարները վճարվում են ՀՀ դրամով՝ ՀՀ ԿԲ կողմից հրապարակված տվյալ օրվա միջին փոխարժեքով: Հաճախորդի ցանկությամբ տոկոսագումարները կարող են վճարվել ավանդի արժույթով:
- Հաճախորդի հաշվում առկա միջոցների նկատմամբ տոկոսագումարները հաշվարկվում են անվանական տոկոսադրույքի հիման վրա: Իսկ տարեկան տոկոսային եկամտաբերությունը ցույց է տալիս, թե որքան եկամուտ կստանա հաճախորդը՝ իր կողմից ավանդի հետ կապված պարտադիր վճարումներ կատարելու և սահմանված պարբերականությամբ վաստակած տոկոսագումարները ստանալու արդյունքում:
- Ավանդատուի ցանկությամբ ավանդի պայմանագրի գործողության ժամկետի ավարտից հետո այն կարող է երկարացվել նույն տևողությամբ և տվյալ տարում գործող տոկոսադրույքով՝ առանց Բանկ այցելելու:

- Եթե կնքվել է առանց երկարաձգման հնարավորության պայմանագիր, դրա ժամկետի ավարտից կամ պայմանագրով նախատեսված հանգամանքները երևան գալուց հետո ժամկետային ավանդի գումարը չպահանջելու դեպքում, գումարը փոխանցվում է հաճախորդի ընթացիկ հաշվին և գումարի նկատմամբ սկսում է հաշվեգրվել Բանկի սակագներով ցպահանջ միջոցների համար սահմանված տոկոսադրույքը, եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով:
- Ավանդային պայմանագրով որոշված տոկոսագումարների չափը Բանկը չի կարող միակողմանի նվազեցնել, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով:
- Տվյալ ավանդային հաշվի համար Բանկի կողմից նախատեսված կամ սահմանված չեն տարեկան տոկոսային եկամտաբերությունը նվազեցնող սակագներ կամ այլ պայմաններ:
- Բանկ ներդրված ավանդի վերաբերյալ տեղեկատվությունը բանկային գաղտնիք է, և ԱԿԲԱ ԲԱՆԿԸ երաշխավորում է դրա գաղտնիությունը:
- Ավանդային պայմանագրից ծագած տարաձայնությունները և վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Բանակցությունների արդյունքում համաձայնության չգալու պարագայում ծագած տարաձայնություններն ու վեճերը լուծվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: